ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վարդանաշեն համայնքի ղեկավարի 2012թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ :

2012 թվականի հուլիսի 11-ին ժամը 15 ^{00}- ին Վարդանաշենի ակումբի շենքում տեղի ունեցավ Վարդանաշեն համայնքի ղեկավար Արթուր Մանուկյանի 2012թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը համայնքի ավագանու և համայնքի բնակչության առջև :

Ներկա էր Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության բաժնի պետ Արթուր Այվազյանը :

Ներկա էին ավագանու վեց անդամները և համայնքի 40 անդամներ :

2012 թվականի առաջին կիսամյակում Վարդանաշենի գյուղապետարան է մուտքագրվել 64 գրություն իսկ դուրս է եկել 46 գրություն :

Համայնքի ղեկավարի մոտ 2012թվ ականի առաջին կիսամյակում կատարվել է 21 քաղաքացիների ընդունելություն :

Ավագանու երեք նիստ է անցկացվել կայացվել է ավագանու իննը որոշում , իսկ համայնքի ղեկավարի 22 որոշում է կայացվել ,արձակվել է 1 կարգադրություն :

2012թվականի առաջին կիսամյակում Վարդանաշեն համայնքում կա 57,0 հա ցորենի և գարու ցանքս, առվույտի մաքուր ցանքս 34,0 հա-ի վրա , առվույտի հին ցանք 116,0 հա-ի վրա, բանջարեղեն խառը 52.0 հա , պարենային բոստան 138,0 հա սեփական հողերի վրա կատարվել է 338,0 հա վարձակալական 70,0 ընդ 2012թ համայնքում կատարված ցանքսեր 467,0 հա , չմշակվող հողեր սեփական 15,6 հա , Վարձակալված 4,0 հա 2012թվականին առաջին կիսամյակում կատարվել է համայնքի փողոցների հարթեցում և նույն աշխատանքը տարվել է համայնքի դաշտամիջյան ճանապարհների վրա :

2012թվականի առաջին կիսամյակում Վարդանաշենի գյուղապետարանը աշխատավարձի պարտքեր չունի :

2012թվականի առաջին կիսամյակում հողի հարկի տարեկան նախատեսված 7167,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 280,0 հազ. դրամ , գույքահարկի 950, 0 հազ. դրամի դիմաց գանձվել է 100,0 հազ. դրամ , Վարձակալական հողերի վարձավճարների 800,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 65, 0 հազ. դրամ :

Դոտացիայի 12445,0 հազ. դրամի դիմաց մուտք է եղել 6222,5 հազ. դրամ:

Վերը նշված հարկատեսակների գանձումները հասկանալի պատճառներով չեն կատարվել , սակայն ես խոստանում եմ , որ երկրորդ կիսամյակին համայնքի բյուջեով նախատեսնված եկամուտների հավաքագրումը կկատարվի ամբողջովին:

2012թվակնի հունիս ամսին վճարվել է գյուղապետարանի էլ էներգիայի վարձ 275,0 հազ. դրամ , խմելաջրի էլ . էներգիայի վարձ 300,0 հազ. դրամ , գրասենյակային նյութերի 40, 0 հազ. դրամ , մշակույթային միջոցառումներ՝ որից վերջին գանզ 300, 0 հազ. դրամ: Դրամաշնորհ, որից նախակրթարանին 480,0 հազ. դրամ, հակակարկտային 180,0 հազ. դրամ, խմելաջրի խորքային հորի պոմպի վերանորոգման համար 650,0 հազ. դրամ, ոռոգման ջրի խորքային հորի պոմպի նորոգման համար 500,0 հազ.դրամ ,գազի գծի կառուցման համար 709,0 հազ. դրամ, ոռոգման ջրագծի կառուցման համար 980,0 հազ. դրամ :Հարգելի համագյուղացիներ ես անձամբ իմ ուժերը ներ եմ դնելու համայնքի ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի միջոցով կատարելու ամեն հնարավորը , որպեսի բարելավենք մեր համայնքի բնակիչների սոցիալ տնտեսական վիճակը:

Բարձրացված հարցեր

1. Ղոնյան Կարեն

   հարց Վարդանաշեն համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում :

2. Բաբաջանյան Սուրիկ

   հարց. համայնքի ներսում գտնվող ինքնաբուխ եղանակով դուրս եկող հորերի վրա ջրի պոմպերի տեղադրում:

3. Զաքարյան Էդիկ

   հարց . Վարդանաշեն համայնքի ակումբի շենքի տանիքի վերանորոգում:

4. Խաչատրյան Սուրիկ

   հարց. հացահատիկի բարձրարժեք սորտերի պահանջարկի բավարարում

Համայնքի ղեկավար Ա. Մանուկյան